

ՑՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ԶԵՌԱԳՐԵՐԻ¹

№ 73

Ս Ա Ղ Մ Ո Ս Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 200:— Պրակներ՝ 18, յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծությունը՝ $8 \times 10,5 \times 4$ սմ.:— Նյութը՝ սպիտակ, լավ մշակված մազաղաթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ, դրսի երեսից գեղեցիկ զարդագծված ճնշումով: Կազմի վրա ամրացված է մի նոր պատյան, վրացական արվեստով լավ զարդագծված:— Պանպանակներ՝ երկու հատ, առջևից և վերջից, գոթական հին գրությամբ:— Վիճակը՝ լավ:— Գրությունը՝ միասյուն:— Տողերը՝ միջին հաշվով 20:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրություն՝ առջևում ունի մի խոշոր կիսախորան և լուսանցադարձ, նկարված ոսկով և երփներանգ գույներով: Բոլոր գլուխների սկզբնավորությունը պարունակող թերթերի սկզբում և լուսանցքում ունի մանր, գեղեցիկ զարդանկարներ: Սկզբնատառերը համարյա միշտ գրված են կարմիր թանաքով, իսկ հատվածների սկզբնատառերը՝ թռչնագրերով և ծաղկագրերով:— Ժամանակը՝ 16-րդ դար:

Զեռագիրը նվեր է Ամենայն Հայոց Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսին՝ Համայն Վրաց Կաթողիկոս Նորին Սրբություն Կալիստրատից: Զեռագրի վրա ամրացված նոր կրկնակազմ պատյանի առաջին երեսի վրա, ներսից, ոսկյա տառերով, ուսերեն տպված է Նորին Սրբության հետևյալ բնծայականը.

«Святейшему Георгу VI

Католикосу-Патриарху

Всех Армян.

От К.—П. Каллистрата».

(«Նորին Սրբություն Գեորգ Զ.

Կաթողիկոս-Պատրիարհին

Ամենայն Հայոց:

Կալիստրատ Կաթողիկոս-

Պատրիարհից»):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 198ա.— Գլխավոր հիշատակարանը մնացել է թերի, գրվել է միայն սկսվածքը՝ «Արդ գրեցաւ փ(ո)քրատիպ սաղմոսարան ի մեծախրաշ մարգարէաբանս...» և այստեղ ընդհատվել:

1. Շարունակված 1950 թվի մայիս—հունիս, հուլիս—օգոստոս, սեպտեմբեր—հոկտեմբեր, նոյեմբեր—դեկտեմբեր և 1951 թվի հունվար—մարտ, ապրիլ—հունիս, հուլիս—օգոստոս և սեպտեմբեր—հոկտեմբեր համարներից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1բ.— Յիշատակ ետուր զիս զայս սաղմոսն Մոզուցի Տէր Սողոմոնն 1832, մարտ 16, ի քաղաքն Տիփսիս: Մովսէս Միրիմանով:

Թ. 199բ.— Յիշատակ է այս սաղմոսարանս տիրացու Աղեքսանդրին եւ իւր ննջեցելոցն եւ կենդանեացն, որ յետ ի ձեռն սրբազնամաքուր Տէր մահտեսի Սողոմոնի, որ կարդայ եւ յիշէ առաջի Քրիստոսի անարժանս որ մեղօք լի: 1831 եւ դեկտեմբերի 9-ին:

Թ. 200բ.— 1832 յունիսի 1: Յիշատակ ետուր զայս մազաղաթէ սաղմոսարանն: Քի ծո Մվ Մր (պիտի վերծանել՝ Քրիստոսի ծառայ Մովսէս Միրիմանով):

Զեռագրի տիտղոսաթերթի վրա կնիք, որի մեջ նկարված է մի նավ և շուրջը ռուսերեն գրված «Со временем достигну».

№ 74

Յ Ա Յ Ս Մ Ա Ի Ո Ւ Ր Ք

Թերթեր՝ 554 (թ. թ. 8ա,բ, 387ա,բ,գ):— Պրակներ՝ 46, յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծությունը՝ $35 \times 26,5 \times 11$ սմ.:— Նյութը՝ հասարակ գեղնած թուղթ:— Կազմը՝ կաշեպատ տախտակ:— Վիճակը՝ բավարար:— Գրությունը՝ երկսյուն:— Տողերը՝ 37:— Գծումները՝ ճնշումով:— Գիրը՝ բոլորգիր:— Զարդագրություն՝ ունի մեկ կիսախորան, մի քանի անարժեք լուսանցադարձեր:— Գրիչը՝ Հովհաննես քահանա (թ. 349ա-ում հիշված է նաև Կիրակոս քահանան):— Պատվիրատուն՝ Խոջա Վարդան:— Ժամանակը՝ 1443 թ.:— Վայրը՝ Բաղեշ:— Վերջին նորոգողը՝ Ստեփանոս:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 549բ.— Փառք համագոյ... որ ետ կարողութիւն Յովանիսի հասանել յաւարտ գրոցս, որ կոչի յայսմաւուրք...: Ըստ այն օրինակի տեսեալ զանառիկ մեծութիւնս եւ զմեծագին մարգարիտս, զգանձս մեծագինս, եւ զերանաւէտ փարթամութիւնս քրիստոսասէր եւ բարեպաշտ եւ մեծազգի տանուտէրս պարոն Վարդանն, եւ ետ գրել զսա բարի յիշատակ հոգոյ իւր եւ ծնօղացն, եւ ամենայն ազգականացն: Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց եւ անկատարս ի կատարելոց, մեղանշականս յանմեղաց, եւ անյիշելիս ի գրչաց, անարժան Յովանէսս, յանձն առի գրել զսուրբ գիրգս ի դառն ժամանակիս, զոր կանք ի վշտի ի ձեռն անօր(ին)ադ եւ սատանայի: Եւ գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Կիրակոսիս ի քաղաքս Բաղէշ, ի հայրապետութեան Տեառն Կիրակիսի ի յէջմիածինն, զի զաջ Լուսաւորչին գողացան ի Սըսոյ եւ տարան յէջմիածինն ի Վաղարշապատ եւ... հաստատեցին զԱթոռ Լուսաւոր-

չին յէջմիածինն եւ եղին կաթողիկոս զՏէր Կիրակոսն, Խլոնց կոչեցեալ, այր ցանկալի, նման մեծ հայրապետացն, ձեռամբ մեծ րաբունապետին Թումա հեռետորի եւ Յովանիսի մեծ րաբունապետի, ի թվականիս հայոց ՊՂԱ (1442 թ.), եւ մեր առաջնորդիս Տէր Ստեփանոսի, եւ յամիրութեան քաղաքիս շիխ Մահմատ Ամիրզին, եւ ի շահութեան Զհանշայ Ամիրզին, որ սպանաւ եղբայր նորա ձեռամբ որդոյ իւրոյ եւ նստաւ ի թաղթն Զհանշայ Ամիրզէն: Եւ եմուտ ի Վրացտուն եւ շատ աւեր արար, զի էառ զբերդն Շամշուլտայ, եւ բազում սպաննումն արար, զի զքահանայքն ետ ի շուան շարել եւ քարկոծ առնել, եւ զայլսն զամենեւեան ետ շարաշար գլխատել: Եւ զկանայսն եւ զտղայսն ետ գերիլ առնել ԲՌ (2.000) անձն. եւ այս ամենայն վասն մեղաց մեբոց եղեւ: Բայց յայս ուրախ եմք, զի ի Քրիստոս եմք ապաւինեալ, զի նոքա, որ կոտորեցան ի տեղի անկելոցն են ժառանգե(ա)լ զանպատում բարիսն ի Քրիստոսէ:

Բայց յայսմ ժամանակի ահարկու նշան եղեւ, զի գլուխ միոյ լերինն, որ նմրուտ կոչի, հրդեհեալ վառեալ ի յանդընդոց, եւ զքարինքն բարձրացուցանէր իբրեւ Ե (5) կանգուն, եւ հալէր, եւ բոցն երեւէր Բ (2) աւուր ճանապարհ, եւ ոք ոչ գիտաց թե այն ինչ նշան է: Բայց ճշմարիտ զայս զմտաւ ածեմք, որ վասն մեղաց հրաշս ցուցանէ մեզ, զի դառնամք ի մեղաց, եւ մեք յամառեալ ի մեղս: Այլ հենց նշան մարդ չէ լուեալ եւ ոչ տեսեալ, եւ դեռ ի տեղացն ծովսն ելանէ, եւ որք տեսանեն զարհուրին, զի լեառն հերձեալ է և վիհ մեծ եղեալ, եւ զքարինքն յիրար եռացուցեալ ի գլուխ լերինն, եւ խրատ մեզ եւ ամենայն ազգի, որ դառնամք ի ճշմարիտ ճանապարհն Քրիստոսի Աստուծոյ: Արդ՝ աղաչեմք զամենեւեանս զքահանայքդ եւ զժողովուրդքդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեսցիք առաջի Քրիստոսի Աստուծոյ զստացող սորա զհոջայ Վարդանն... (3 տող անընթեռնելի) Ամէրին, Աղուծին եւ..., եւ կենակցին իւր... զաւակացն Վարդելին եւ Յովիդին, եւ հանգուցելոցն ի Քրիստոս՝ Յովանիսին եւ Բուտախին, եւ (իւրայն)ոցն առ հասարակ: Եւ ինքն Քրիստոս, որ առատն է ի տուրս բարեաց, տացէ նոցա զերկնից արքայութիւն: Եւ լսել տայ զձայնն որ ասէ, Եկայք արհնեալք Հօր իմոյ ժառանկեցէք զանտրտում ուրախութիւն:

Դարձեալ աղաչեմ զամենեւեան զքահանայքդ եւ զժողովուրդդ, յիշեսցիք առաջի Քրիստոսի՝ զանարժան եւ զմեղաւոր ծառայս զՅովանէս գրիշս եւ ուղիղ սրտիւ եւ լիակատար բերանով Աստուած ողորմի ասացէք ինձ եւ ծնօղաց իմոց Մկրտիչ քահանային եւ Շահանդուխտին, եւ մեծ պապերուն՝ Խաչատուր քահանային, Յակոբ քահանային, եւ քեռուն իմ Մելքէսէթ քահանային, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, զի շատ աշխատեցաւ հետ ինձ, Աստուած արասցէ իւրն բարի փոխարէն յիւր երկնից արքայութիւն, ամէն, եւ ողորմի իմ մեծ մամբրուն Եղիսաբեղին եւ (Խա)թունին, եւ ամենայն արեան մեր(ձաւո)րաց իմոց, եւ մեղաւոր (Յով)անէս գրիշս եւ կենակցին իմոյ եւ ամենայն արեան մերձաւորացն, եւ Խաթունին որ շատ մէրութիւն է առել մեզ ի գրոց գրելս, Աստուած արասցէ իւրն փոխարէն, ամէն: Դարձեալ ողորմի եւ Վարդանին եւ իւր ծնօղացն, Շահամիրին եւ Աղուծին, եւ քեռն իւրոյ, եւ ծաղկեալ զաւակացն Ուղիդին եւ Վարդելին, եւ ամենայն ազգականացն, կենդանեացն եւ հանգուցելոցն, ամէն: Գրեցաւ գիրգս այս ձեռամբ Յովանիսի ի քաղաքս յայս Բաղէշ կոչեցեալ, ընդ հովանեաւ Ս. Եկեղեցեացս որ աստ կան հաւաքեալ: Ի թուականիս ՊՂԲ (1443 թ.): Արդ՝ աղաչեմ զամենեւեան որք կարդաք զսա կամ արինակէք, մեղաց թողութիւն խնդրեցէք ստացողի սորա և զժողիս, զի բազում աշխատութեամբ գրեցի զսա ի բազում տեղիս, ի դառն եւ ի շար ժամանակիս, որ Բ (2) տարի գրեցի զսայ ի խուցս Սուրբ Կիրակոսիս եւ ի Սուրբ Գէորգա(յ) ժամատունն, եւ ի մարդոյ ոչ մէկ խնձոր տեսի եւ ոչ մէկ խիար, վասն այն՝ զի սէրն բարձեր էր ի հայոց ազգէս, մահաւան(դ) յիրեցականաց: Դարձեալ աղաչեմ զձեզ անմեղադիր եղերուք սղալանաց եւ խոշորանաց սորա, զի կար մեր այս էր: Դարձեալ ողորմի Քրիստոս Աստուած օրինակի շնորհողին Ղրիմ Խաթունին եւ իւր ծնօղացն եւ քահանայիցն որ կամակից եղեն ի տալն Տէր Մարտիրոսին, եւ Թադէոսին, եւ Արսենին, եւ Կարապետին, եւ Գրիգորին, որ Աստուած մշակ առանդ մօթոյ պահեսցէ զսոսա ի դուռն Սուրբ Աստուածածնի եւ Գէորգա(յ) զօրավարին. եւ յետ (ելան)ելոյ, ընդ սուրբ քահանայիցն դասեսցէ... ստացող սորա ար(ժանի արա)սցէ իւր տեսլեանն, ամէն:

Ո՛հ գիրս մնայ,

Ձեռս հող եւ փոշի դառնայ,

Այլ ողորմութիւն Տեառն մնայ,

Որ յետոյ նորոգէ զհողացեալ

բնութիւնս Աղամայ:

Թ. 241ա. — Վասն մեղաւոր գրչիս (Յովանիսին)...

Վասն իմ զՏէրն աղաչեցէք
 եւ թողութիւն ինձ հայցեցէք:
 Միթէ լինի ողորմի
 Յովանիսիս անարժանի,
 եւ փոխեցէ զիս ի բարի,
 Զի մի անփոխ մատն իմ շարի:
 Ո՛վ քահանայք աստուածասէրք,
 Մաքուր մտօք սրբանուէրք,
 Յորժամ որ զայս գիրքս կարդնք,
 Յաղօթս ձեր զմեզ յիշեցէք,
 եւ Աստուած ողորմի ասացէք անարժան
 Յովանիսիս, եւ ծնօղացն իմ Մկրտիչ քահա-
 նայի եւ Շահանդութիւն, եւ մեծ պատ-
 րուն՝ Խաչաւատուր քահանային եւ Յակոբ
 քահանային, եւ բարի խրատատուացն, եւ ու-
 սուցողացն իմ, եւ վարպետացն: Եւ ստացողի
 գրոց բարեմիտ տանուա(ի)րոջն Վարդանին,
 եւ իւր ծնօղացն Շահամիրին եւ Աղութին, եւ
 քուրոջն, եւ կենակցին իւր Սառին եւ իւր-
 ե(ա)նց զաւակացն, որ հանգուցեալ են ի
 Քրիստոս, Յովանիսին, Բուտախին եւ աշ-
 լոցն, եւ մեւս զաւակին Ուղիղին, եւ ամե-
 նայն ազգացն, եւ խցան շինօղիս, որ աստ
 գրեցի: Այլ լուն խիստ զահմաթ կու տայր,
 զի բազում էր ի խուցս, զի այլ մարդ չկայր
 ի նէրս, եւ ամենայն փոխան զիս կերան,
 Աստուած ողորմի կարդացողացդ եւ լսո-
 (ղացդ):

Թ. 280բ. —

Վայրի քօշիկ մի կայր քարձուկ,
 Անուշահոտ եւ սպրտկուկ.
 Ի յԱսորիս եղեւնատունկ,
 Բաներ ասաց շաւատ մի դիպուկ:

Թ. 349ա. — Որոց աղօթիւքն ողորմի Քրիս-
 տոս Աստուած ստացողի գրոցս Վարդանին,
 եւ իւր ծնօղացն Շահամիրին եւ Աղութին, եւ
 մեղաւոր Կիրակոս գրչիս անարժան երիցիս,
 եւ եղբօրն իմ Յովանէս վարդապետին,
 կ(արդացողաց)դ:

Թ. 545բ. — Ո՛վ սուրբ կարդացողք, ան-
 մեղադիր լերուք վասն այս պատմութեանս,
 զի յօրինակն յայն կայր, այլ յետոյ գտաք
 եւ գրեցաք յետքս ի ստոյգ եւ յողորմի...:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 3ա. — Ես մեղաւոր Արիստակէս Տէր Մինասի
 ծառայ եղայ բոլոր ծառայներին, որ ինձ արժան ա-
 նեն սուրբ լուսին, դուն սիրուն լուս Քրիստոս:

Թ. 6բ—7ա. — Եւ վերջի ստացողի սուրբ գրոցս
 Խոջայ Աղազարին, եւ ծնօղաց նորին Փիրումին եւ
 Սանդուխտին, եւ եղբաւրն Անձրեւին, եւ որդոցն Մա-
 տուրին, Աւետիկին եւ Փաթանին, կարդացողաց եւ...:

(Բազմաթիւ էջերում գրված են նույն անձերի ա-
 նունները, ինչպես նաեւ երբեմն նոր անուններ, որոնք
 են հետևյալները).

Թ. 7բ. — Մկրտիչ, Մալխաս, Թէոդորոս:

Թ. 13ա. — Մելիք Խաթուն:

Թ. 15ա. — Ոսկի Տատիկ, Ասլի Խաթուն:

Թ. 17ա. — Թորոս, Խանկէն, Մելիք, Մարտիրոս, Ա-
 ղազար, Շուշան, Թանկիկ, Աւղլան, Կէրաֆին, Հոփի-
 սիմ, Նաւասարդ:

Թ. 18բ. — Խանզան, Յաւիհնար:

Թ. 19բ. — Խանփաշ:

Թ. 21բ. — Սօլթան, Փուտ, Պզտիկ Տատիկ, Անայէ:

Թ. 35ա. — Աղամալ:

Թ. 43բ. — Մամուկ:

Թ. 48բ. — Եւ վերջի ստացողի գրոցս Աղազարին
 եւ ծնաւղացն Փիրումին, Սանդուխտին, եւ տարա-
 ժամ մահուամբ զնացելոյն առ Քրիստոս Խոջայ Անձ-
 րեւին Աստուած ողորմի ասացէք:

Թ. 125բ. — Մարգար:

Թ. 201ա. — Ի յայս եջի գրելս քնեցայ, անմեղադիր
 լերուք:

Թ. 247բ. — Բալասան:

Թ. 326ա. — Նահանջի տարին ամիսս այս

Ի՞նչ (29) օր դառնայ,

Մինչ ի դարնանամուտն օր մի

յաւելնայ,

Յայն օրն զնահապետացս կարգա

եւ զիս յիշեայ:

Հիւրասէր ծեր Նազելին,

Զենոյր խօսուն գառն ի սեռի,

Ունէր կին մի բարի,

էր ծիծաղկոտ 'ւ առաքինի:

Թ. 328ա. — Որպէս զգառն էր անմեղուկ,

Կայր սպանողին առջեւ հեզուկ.

Որդիս ունէր Բ (2) մանուկ,

Մինն էր յիմար մեան խաբուկ:

Թ. 329ա. — Գօտեմարտն ճակատուն,

Յաղթահարեալ եղեւ նկուն.

Ելեալ երթայր կաղ կաղ ի տուն,

Արջառ 'ւ ոչխարք իւր խայտ պտուն:

Թ. 349ա. — Եւ վերջի ստացողի գրոցս ուլ օր
 (հ)անդիպի, կարդայ, կամ վարդապետ, կամ քահա-
 նայ, կամ սարկաշվ(ագ), մի բերան ասացէք Աստ-
 ւած ողորմի Տէր Սա(ր)գիսին, եւ ուր կողայկիցն
 Օվսաննային եւ ուր որդին Տէր Մինայսին, եւ Ապր-
 հա(մ)ին, եւ Մնացականին, եւ Խաչիկ(ին), եւ
 Էստերէն Եղիսաբեդին, ուլ օր Գա(ր)դայլով կամ
 օրոնել(ով) մի բերան հոգար սրտով ասացէք Աստ-
 ւած ողորմի ուրէն, ուլ օր յիշի յինքն յիշեալ լինի
 առաջի Քրիստոսի: Թիւ հայոց ՌԲՃՀԹ (1830 թ.)
 մայիսի Ա.ի (1-ին):

Թ. 382ա. — ԸՍտեփան:

Թ. 499ա. — Եւ վերջի ստացողի գրոցն ԸՍտեփա-
 նին, եւ ծնողացն Տէր Կիրակոսին եւ Բամպարին, եւ
 քվերացն Կատանին, Աուդումին, Աղստաբետին, եւ
 աղբօրացն Զաքարէ, Դիոնիսիոսին, եւ որք զողոր-
 միս ապէք, ամէն:

Թ. 549բ. — Դարձեալ Աստուած ողորմի Վերդա-
 տ(ին) նորոգեցաւ յայսմաւորք ձեռնամբ ԸՍտե-
 փաննոսի, Թի(ւն)...

Թ. 550բ.— Դարձեալ աղաչեմք:
Ի թվականութեանս հայոց ի ԶԺԱ (1462 թ.):

(Երեք ու կես տող անընթեռնելի) ...Միածնի Որդոյն Աստուծոյ յարեան աստուածասէր ոմանք հաւա(տ)արիմ եւ աստուածասէր, որոց անուանքն՝ Էւատ, եւ Գրիգոր, եւ Կիրակոս կոչի, որ մեծ բարութիւն արարին (երկու տող անընթեռնելի) ... ետուն գրել ձեռամբ իւրեանց, զորոց անուանք նոցա գրեսցին ի դպրութիւն կենացն, եւ ջնջեսցին ձեռագիր յանցանաց նոցա: Եւ թէ որ յանդգնեսցի եւ դարձեալ հարկ ի վար դնէ, զպատիժն զկայենի առնու, եւ զանէծն Յուդայի, եւ ով ի սահմանս մեր մնայ, զոր եղաք, զպարգեւս Աստուծոյ առնու, եւ յամենայն սրբոց, ամէն: Աստուած արհնեալ է զլուսբարաքէն, զԱղուբշին (երեք տող անընթեռնելի) ... վերուց ի Քրիստոնէից, զուրեմքն ի մեղաց ազատէ, եւ Յոհանէս վարդապետս, որ զկտ(ակ)ս գրեցի: Ով որ զմեր հրամանքս կատարէ, նայ արհնեալ եղիցի յամենայնգլար աշոյն Աստուծոյ, ամէն:

Թ. 551ա.— Փառք Ամենասուրբ Երրորդութեան... Աւրդ՝ յիշեցէք զհաւատարիմ եւ զբարեմիտ այրն զնոջայ Աղազարն, որ ի վերջինս ըստացաւ զաստուածային բուրաստանս եւ զանկողնպտելի գանձս, որ ասի յայսմաւոր(ք), ի հալալ արդեա(ն)ցն իւրոց, յիշատակ բարի իւրն եւ ծնողաց իւրոց, հաւրն Փիրոմին, եւ մաւրն Սանդուխտին, պապուն Թորոսին, եւ Խանկէն, Միլիքին, եւ հաւրեղբարցն Աղազարին, եւ Մարտիրոսին եւ հաւրաբլերցն Շուշանին, եւ Թանգիկին, եւ եղբարն Խոջայ Անձրեւին, որ յայսմ ամի մանուկ տիար փոխեցաւ առ Քրիստոս ի յոյսն ամենեցուն, Աստուած զինքն երկնից արքայութեանն արժանի առնէ հանդերձ ծնաւդար եւ ամենայն զարմիւր, ամէն: Եւ զկողակից Անձրեւին, զԽանզատէն, եւ զդուատրն Յաւրինարն, եւ զմիւս եղբարք Աղազարին՝ զՄկրտիչն, զՄալխասն, եւ զԹէոդորոսն, եւ զբլերքն՝ զՈսկի Տատիկն, զԱսլի Խաթունն, զՆաւասարդն, զԱւղան Գէրաքն, եւ զՀովսիսմէն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք: Դարձեալ կրկին անգամ յերես անկեալ աղաչեմ զդասս լուսբարամիցդ, յորժամ հանդիպիք յայսմ սուրբ լուսազարդ բուրաս(տ)անին, լի բերանով Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս վերոյգրեալ Խոջայ Աղազարին, եւ ծնողաց նորին, եւ հանգուցեալ եղբարն Անձրեւին, եւ կողակցին Աղազարին, Խանփաշին, եւ որդոցն՝ Մատուրին, Աւետիկին, Փաթանին, եւ դստերն Մելիք Խաթունին, եւ ամենայն արեան մերձաւորացն, կենդանեաց եւ ննջեցելոցն, եւ այն, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս առ հասարակ ողորմեսցի իւր միւս անգամ գալստեանն, ամէն: Ի թվականիս հայոց ՌԿԸ (1619 թ.), յապրիլ, ամսոյ ի ԻԲ (22):

Յիշեց(էք) մեղաւոր անարժան ըՍտէփան:

Թ. 551բ.— Եւ վերջի ստացողացս գրուս յայսմաւորիս օվ օր որ հանդիպի կարդալով կամ օրին(ակ)ելով, կամ վարդապետ, կամ քահանայ, կամ սարկավակ, կամ մանկու(ն)ք, ով օր ընդ(ե)ռնուն, քաղց-

րաքառքառ, հօժար սրտով ասացէք Աստուած ողորմի Տէր Մինայսի(ն), եւ Ապր(ա)համին, եւ Մնայցական(ի)ն, եւ Խաչիկին, եւ Տէր Սարգիսի կողակիցն Եվսանին եւ դստերին Եղսայպիրին, եւ այլ ընդանիացն: Ով օր յիշեալ գրողացս, յինքն յիշեալ լինի առաջ(ի) Քրիստոսի Աստուծոյ մերոյ, ամէն: Ըմի Տեառն 1830 հ(ու)նվարի 4, ըմի Տեառն ՌԸ(Ճ)Լ (1830 թ.), թիւն հայոց ՌԲՃԶԹ (1830 թ.) հ(ու)նվարի Գ (3):

Դարձեալ աղաչեմ զձեզ, ով միամիտ աղաղկի բրիտոն(ե)այք, ի սուրբ մաքրայփա(յ)լ աղօթուք յիշեցէք զիս, որ լի ի մա(ր)մինամեղօք, Տէր Սարգիս: Ով օր յիշեալ զիս, յինքն յիշեալ լինի առաջի դայան սերօք(է)ական, առաջի Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

Էն ժամանակ, որ կարգվեցինք անարժան Տէր Մինայսէս, թիւն Փրկիչն ՌԸԾԻԹ (1829 թ.), շաղ նեղիկիք տաճիկաց ձեռն, շայտ հալածում արին, որ հատուցում չեւաւ...

№ 75

Ճ Ա Շ Ո Յ

Թերթեր՝ 486 (1ա+1բ):— Պրակներ՝ 41, յուրաքանչյուր 12 թերթից:— Մեծութունը՝ 26,5×20×10 սմ:— Նյութը՝ գեղնած հաստ թուղթ:— Կազմը՝ չունի:— Վիճակը՝ ոչ բավարար, առջևից 3 պրակ պակասում է, միջից եւ վերջից էլ ընկել են բազմաթիվ թերթեր:— Գրութունը՝ երկսյուն:— Տողերը՝ միջին հաշվով 32:— Գծումները՝ ճնշումով:— Գիրը՝ բուրգգիր:— Զարդագրութուն՝ ունի գեղեցիկ գլխազարդեր եւ լուսանցազարդեր, ծաղկազարդ եւ թռչնազարդ եւ մի կիսախորան (թ. 261ա):— Գրիչները՝ Հակոբ քահանա (թ. 162ա) եւ Սարգիս քահանա (թ. 266ա):— Ժամանակը՝ 1640 թ.:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 161բ.— Ազարիայ զստացող գրոցս (մի անվան տեղ բաց թողնված է) ի մեղաց որպէս զպոռնիկն եւ զաւազակն, եւ մտցէ ի դրախտ Եղեմայ, ամէն:

Թ. 176բ.— Սուտանուն Յակոբ քահանայն յիշեա Տէր ի քում արքայութիւն, ՌԶԹ (1640 թ.):

(Ա)զգիս հայոց թվականին
Կրկին քառակ երկ հարիւրին
ՂԱ (1642 թ.) ամին,
Էառ զգանձս աստուածային:

Մարգարէաց առաքելոց բանքն բա...
(երկու թերթ պատուվել է այստեղ):

Թ. 266ա.— Դարձ(ե)ալ զ... զանարժան զԸժող սորա Սարգիս քահանայս, եւ զուսուցիչն իմ Մկրտիչ վարդապետն յիշեցէք, ով պատուելի հայրք:

Թ. 451ա. — Յիսնակաց երկրորդ կիրակին կարդա՛, եւ զմայր գծողիս Մարիամն յիշեա՛ :

Թ. 455ա. — Իւրբաթի օրն ճաշու(ն) կարդա՛ յ եւ զանարժան գծողս յիշեա, եւ զհայրն իմ Մա(տ)թէո(ս) քահանայն, եւ զմայրն իմ Մարիամն, եւ եղբարքն իմ Սարգիսն եւ Սուլ-խանն, որ տղա(յ) տիաւք փոխեցան առ Քրիստոս: Աստուած ձեզ (յ)իշէ, ո՛վ եղբարք:

№ 76

Ո Ս Կ Ե Փ Ո Ր Ի Կ

Թերթեր՝ 489: — Պրակներ՝ 41, յուրաքանչյուրը 12 թերթից: Մեծութունը՝ $24 \times 18,5 \times 9,5$ սմ.: — Նյութը՝ դեղնած բարակ թուղթ: — Կազմը՝ կաշեպատ տախտակ, քայքայված: — Վիճակը՝ բավարար, միայն սկզբից ընկել է 7 թերթ բնագրից և հետագայում ավելացված է նոր գրչությամբ: — Դրութունը՝ երկսյուն: — Դատարկ քղեր՝ 22—23: — Տողեր՝ 27: — Գծումներ՝ ճնշումով: — Գիրը՝ բոլորգիր: — Զարդագրություն՝ ունի գեղեցիկ լուսանցազարդեր և զարդազրեր, թռչնազրեր և ձկնազրեր: — Գրիչը՝ Դավիթ քահանա: — Պատվիրատուն՝ Խլղաթ: — Ժամանակը՝ 1661 թ.: — Վայրը՝ Աղբակու երկրի էրզնկոնի գյուղ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 6ա. — Նշատ վարդապետին Յոհաննու եզրնկեցոյ, արար եւ կանոն հասարակաց, քրիստոնէից, քահանայից եւ ժողովրդոց, ի կանոնական սահմանաց:

Թ. 7բ. — Բան շահաւէտ եւ օգտակար յաղագս հաւատոյ:

Թ. 10ա. — Յաղագս խրատ մկրտութեան պիտանի:

Թ. 13բ. — Նորին Յոհաննու: Վասն պսակի եւ ամուսնութեան:

Թ. 16բ. — Նորին քահանայ Յոհաննու: Վասն շնութեան:

Թ. 18ա. — Յաղագս գողութեան եւ զանազան մեղաց:

Թ. 88ա. — Գիր եւ բուրք սիրոյ եւ միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի եւ սուրբ պապուն Սեդրեստոսի եւ Տրդատայ հայոց արքային եւ սրբոյն Գրիգորի հայոց Լուսաւորչին:

Թ. 120ա. — Պատմութիւն սրբոյն Յոհաննու Աւանեսցոյն քէ ուստի էր:

Թ. 137բ. — Պատմութիւն գալըստեան Մուհամմատին ի հայս եւ զնալ ընդ դէմ նորայ:

Թ. 147ա. — Երանելոյն Սարգսի Շնորհալից վարդապետի ասացեալ: Բան շահաւէտ եւ օգտակար լսողացն:

Թ. 173բ. — Պատմութիւն Ներսէսի հայրապետին եւ Խաղայ Եպիսկոպոսին:

Թ. 193բ. — Երանելոյն Աթանասի Եպիսկոպոսի հարցմու(ն)ք վայելող եւ պիտանիք կիրողի Երուսաղէմի հա(յ)րապետին յաղագս հանճարոյ:

Թ. 220բ. — Երանելոյն Յով(հ)ան(ն)էս Գառնեցոյ ասացեալ բան շահաւէտ եւ օգտակար, ամենայն մարդ որ ցանկայ եւ փափակի անանց կենացն եւ անվաղջան փառացն հասանել զկեանս այսմ աշխարհի:

Թ. 228բ. — Երանելոյն Եփրեմի Խո(ւ)րին Ասորոյ ասացեալ, վասն պահոց եւ ողորմութեան:

Թ. 271բ. — Սրբոյն Յակոբայ Սրնոյ Եպիսկոպոսին ասացեալ, բան վասն դարձ(ի)ն Անտիոքայ քաղաքին:

Թ. 350բ. — Երանելոյն Յով(վ)հաննու Ոսկերեանի, ասացեալ յԱւետարանի մեկնութեան:

Թ. 395բ. — Մեծի եւ հրաշափառ գալըստեանն Քրիստոսի, որ է օր առաջին աւուր արարչութեան Աստուծոյ, որպէս եւ ասէ մարգարէն աստուածախօսն Մովսէս:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. Թ. 487ա—489բ. — Փառք...

Դասաւորեա Տէր զհոգի Խլղաթին,

Եւ ծնողացն Յով(հ)ան(ն)իսին եւ
Խանաղին,

Եւ կողակցին իւր Խանաղին,

Եւ որդոյն իւր Մուրատին,

Եւ դստերն Նուբարին,

Եւ աներացն Ենգիբէգին,

Եւ Զմրութին, ազգականացն իւր
ամենին:

Քրիստոս փառօք գաս հայրական,

Դատ առնելով որդւոց մարդկան,

Ով որ շիշխէ տալ պատասխան

Աստուածորդւոյն հօրն անվախճան:

Քաղցր ձայնիւ ասէ ընդ այն,

Որ աստ յիշեն զօր մահուան,

Բաշխեն յ(ը)նչիցն 'ւ աղբատի...

Դարձեալ կրկին անգամ Աստուած ողորմի ասացէք Խլղաթին, կողակցին Խանաղին, որդոյն Մուրատին, Շաղաւաթին, Պետրոսին, դստերացն Մարիամին, Զմրութին, Մուրաթին, էթարին, պապուն Յով(վ)հան(ն)էսին, Թումին, կողակցին Մարիամին, որդոցն Պարոնվարդին, Վարդանին, Մուրատին, Ազատին, Անտրիասին, որ բազում աւուր ցանկայր յիշատակի սուրբ եկեղեցոյն Գէորգա(յ), եւ ետ գրել զսուրբ գիրքս, որ կոչի ոսկեփորիկ:

Միջնորդութեամբ Սուրբ Աստուածածնին
 Եւ Յով(հ)ան(ն)ու Կարապետին,
 Եւ սրբոյն Ստեփանոսին,
 Այլ եւ մերոյ Լուսաւորչին,
 Զի քաղցրասցի կամք Արարչին
 Ննջեցելոցն որ գրեցին,
 Պայծառ պահէ նոցա զհոգին,
 Ի ա(ր)ժան առնէ սրբոց դասին, ամէն:

Դարձեալ Աստուած ողորմի ասացէք իշխա-
 թին, կողակցին Խանաղին, որդոցն Մուրա-
 տին, Շաղաւաթին, Պետրոսին, Պարոնովար-
 դին, Վարդանին, միոյս Մուրատին, դստե-
 լացն Մարիամին, Մրուաթին, Էթարին, պա-
 պուն Յով(հ)ան(ն)էսին, Թովմին, կողակցին
 Մարիամին, Ազատին, Անտրիասին: Զի
 յիշեաց զբան որ ասէ. Երանի այնոցիկ որ
 ունի զաւակ ի Սիոն եւ ընդանի (յ)ճրու-
 սաղէմ, զի շունի մարմնաւոր որդի, այլ հո-
 գեւոր գիրգս է նորա զաւակն բարի, մտօք
 խորհեցաւ, բանիւ խոսեցաւ, կամաւ Փրկչին
 կատարեցաւ: Եւ ետ ի հալալ վաստակոցն
 զգին սուրբ գրոցս, եւ Աստուածն ամենայն
 արարածոց թողու զամենայն գործեցեալ
 մեղքն իշխաթին եւ կողակցին, եւ ծնողաց
 նոցին եւ ամենայն անգականացն, հարց եւ
 եղբարցն, եւ Աստուած ողորմի ասացողացն:
 Աստուած ողորմի նոցա հոգոյն եւ արժանի
 առնէ զնոսա զամենեւեան իւր արքայու-
 թեանն, ամէն:

Եւ արդ՝ ես իշխաթս ետու զսուրբ գիրք ի
 դուռն սրբոյն Գէորգայ զօրայվարին, ի վա-
 յելումն [քահանային] (շնչված հետագայում)
 Տէր Խաչատուրին, ի փոքու խել ժամանա-
 կաց մի ոք իշխեսցէ (յ)իմոց կամ յօտարաց,
 ծախել կամ գողանալ, գրաւ դնել, եւ ով որ
 յանդգնի զանէծքն առնու Կայէնին, զՅուդա-
 յին եւ զայլ խաչ հանողացն, ամէն:

Եւ արդ՝ յեր(ե)սս անկեալ աղաչեմ զդասս
 սուրբ քահանայիցդ, որք հանդիպիք ամա
 կարդալով կամ օրինակելով, կամ հարաւան-
 ցիկ տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ եւ
 յերկնաթռիչ յաղօթս ձեր զսուտանուն Դաւիթ
 քահանայ, զի միայն զանունս ունիմ, եւ ոչ
 զգործ կարգաւորի: Դու մի բերան Աստուած
 ողորմի ասա ինձ, Աստուած ողորմի Ռ
 (1.000) բերան ձեզ եւ ձեր ննջեցելոցն, ա-
 մէն:

Այլ եւ քահանայ(ա)պետն Տէրն մեր Յի-
 սուս Քրիստոս, զքահանայնդ ընդ քահանա-
 յիցն արժանի առնէ եւ բարով վայելել տա-
 ցէ, որքան աստ էք եւ յետ աստեացս ելա-
 նելոյ ընդ պարս մարգարէից խառնէ, ընդ
 խու(մ)պս մարտիրոսաց կարգէ, ընդ երամս
 ճգնաւորացն հանգուցանէ զդաս քահանայից,
 իշխաթին եւ կողակցին իւր ննջեցելեօքն, ա-
 մէն:

Եւ արդ՝ յերեսս անկեալ աղաչեմ զդասս
 յուսերամ քահանայիցդ, որ հանդիպիք ամա
 կարդալով կամ օրինակելով, եւ կամ հարե-
 ւանցի տեսանելով, յիշեցէք ի մաքրափայլ
 յաղօթս ձեր զիշխաթ, որ ետ գրել զսուրբ
 գիրքս ժառանգ եւ յիշատակ իւր, եւ այլ ոք
 շունի ժառանգ եւ յիշատակ ի վերայ երկրի,
 բայց միայն յոյս Քրիստոս եւ սուրբ գիրքս
 ի յեկեղեցին...

Արդ՝ գրեցաւ սուրբ գիրքս ի յերկիրն Աղ-
 բակու, ի գիւղն որ կոչի Էրընկունի, ընդ հո-
 վանեալ Սուրբ Ստեփանոսին, ի թվ(ա)կա-
 նիս հայոց ՌՃ և Ժ ամին (1661 թ.), ի յա-
 ռաջնորդութեան սուրբ ուխտիս մերոյ Բար-
 թուղիմէոսի, Տէր յնայի ըստունապետի, որ
 յայսմ ամի շինեաց գօլն Խանասօրայ եւ լա-
 լի քան ոխմ (?) առեց, Աստուած ինքն անաս-
 սան պահեսցէ եւ յետ աստեացս արժանի
 առնէ յերկնից արքայութեանն:

Հայր մեր որ յերկինս...:

(Յուրաքանչյուր գլխի վերջում ունի փոք-
 րիկ հիշատակարան, ուր խնդրվում է հիշել
 իշխաթին եւ յուր ազգականներին):

Թ. 343բ—344ա.— Աստուած արհնէ փա-
 րիխան, որ անարժան գրիչս Ասիդով պատ-
 (ո)ւեց, Աստուած իւր մեղքն թողու, որ հար-
 կիք կանէ մեզ:

№ 77

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

Թերթեր՝ 118:— Պրակներ՝ 10, յուրաքանչյուր
 12 թերթից:— Մեծուրյունը՝ $22 \times 17 \times 1,5$ սմ.:—
 Նյութը՝ դեղնած հասարակ թուղթ:— Կազմը՝ շու-
 նի:— Վիճակը՝ լավ, սակայն սկզբից և վերջից թե-
 րի: Սկզբից պակասում է 13 թերթ:— Գրությունը՝
 երկայուն:— Տողեր՝ 27:— Գծումներ՝ ճնշումով:—
 Դիրք՝ նոսր գիր:— Զարգացրություն՝ շունի, միայն
 պարբերությունների վերնագրերը և նոր պարբերու-
 թյունների առաջին տառերը գրված են կարմիր թա-
 նաքով:— Ժամանակը՝ 17-րդ դար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

(Բժշկական գիտելիքները և զանազան
 հիվանդությունների և ցավերի դարմանները
 դասավորված են կանոնավոր կերպով, այս-
 բեանական կարգով):

Թ. 1ա.— (Սկիզբ) Աչաց ու թոզ կամ
 սպիտակ լինի...:

Թ. 118բ.— (Վերջ).— Քնանալոյ հիւան-
 դիւ...

Մի քանի հետաքրքրական վերնագրեր.

Թ. 2բ.— Արիւնն որ խիստ աւելանայ եւ
 դուրս զարնէ:

Թ. 3ա.— Արիւն քֆանդի:

Թ. 4բ.— Բերնի ցաւի, բորի և ֆորի, պէ-
 վասիրի եւ այլ:

Թ. 9ա.— Գիրանալոյ, որ զանձն փհնացնէ
եւ գիրացնէ:

Թ. 15ա.— Դիւանարի:

Թ. 15բ.— Եախու բանալոյ:

Թ. 17բ.— Երեսի այրածի, յարեւոյ, կամ
ցրտոյ եւ կամ փամոյ:

Թ. 18բ.— Զանկիկն կախուածի:

Թ. 19ա.— Ըղեղն արիւն կարածի:

Թ. 20բ.— Թոքացաւորեան:

Թ. 21ա.— Իջուածփի, որ է նազլայի, որ ի
սափու(քեն)է իջուած լինի:

Թ. 22ա.— Լեզուացալի:

Թ. 24ա.— Լուծման խրատ:

Թ. 29ա.— Խայթածի մեղրանաննոյ:

Խելփն պտրտածի:

Թ. 31ա.— Խօսփն սպառողի:

Մաղկի:

Թ. 33բ.— Կարի կանանց բերելոյ:

Կատղած շան խածածի:

Թ. 34բ.— Կուզ լինողի:

Թ. 37ա.— Հազի եւ նազլայի:

Թ. 43բ.— Զայնի բանալոյ:

Թ. 44ա.— Զեռփն դողալոյ եւ սկսի շար-
ժել:

Թ. 48ա.— Դապզի, տես փոր կապի:

Թ. 48բ.— Զակատացալի:

Թ. 50բ.— Մազն անեցուցանելոյ:

Թ. 65բ.— Մեղու խայթածի:

Թ. 70բ.— Յղանալոյ:

Թ. 75բ.— Նստոյ տեղի բուլորեան:

Թ. 76ա.— Շան խածածի եւ այլ գազանի:

Թ. 77բ.— Ոսկրակոտրածի:

Թ. 78ա.— Ուշ հարբենալոյ:

Թ. 79ա.— Չհարբենալոյ:

Չփնանալոյ:

Պաղ առածի եւ փամոյ:

Թ. 82ա.— Պորտն անկածի եւ ցալի:

Թ. 82ա.— Զերմի, որ երեք օրն անգամ
մի կու բռնէ:

Թ. 84բ.— Ռուփիայի:

Թ. 85բ.— Սնկան, որ լինի առ մարդուն:

Թ. 93ա.— Սպեղանի այրածի:

Թ. 98բ.— Վատուծանալոյ:

Թ. 100բ.— Տղան հեշտ բերելոյ:

Թ. 104բ.— Յանկական ախտն սանձելոյ:

Փայծղան:

Թ. 106ա.— Փողացաւորիւն:

Թ. 112ա.— Փոր կապն լուծելոյ:

Թ. 114ա.— Փուշ մտածի փողն:

Քամոյ դեղ:

Թ. 116բ.— Քար ընծայածի երիկամն:

Թ. 117բ.— Քրի արեան դադարելոյ:

(Տրվում են բազմաթիւ հիվանդութիւններ
ի, ցավերի եւ ախտերի դարմանումի զանա-
զան ձևեր, միջոցներ եւ դեղորայքի մեկից
ավելի ֆորմուլաներ):

№ 78

Ժ Ո Ղ Ո Վ Ա Մ Ո Ւ

Թերթերը՝ 23:— Պրակները՝ 3, յուրաքանչյուրը՝ 8
թերթից:— Մեծութիւնը՝ $20,8 \times 16,5 \times 0,5$ սմ.—
նյութը՝ սպիտակ հասարակ թուղթ:— Կազմը՝ չու-
նիս— Վիճակը՝ բայթայված:— Գրութիւնը՝ միաստուն
(թ. թ. 1—15) եւ երկսյուն (թ. թ. 16—23):— Տողե-
րը՝ 26—30:— Գծումները՝ ճշգրտով:— Գիրը՝ նոսր
գիր:— Զարդագրութիւն՝ չունի, միայն վերնագրերը
եւ որոշ հատուկ անուններ գրված են կարմիր թանա-
քով:— Գրիչը՝ Հակոբ վարդապետ, ի կարգին Հի-
սուսյանց:— Պատվիրատուները՝ Հարություն եպիսկո-
պոս Կոստանդնուպոլսեցի եւ Տեր Խաչատուր:— Ժա-
մանակը՝ 18-րդ դար:— Վայրը՝ Կոստանդնուպոլիս:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Թ. թ. 1ա—14բ.— Հայաստան քրիստո-
նէայ, կամ ցանգ հայոց կաթողիկոսաց եւ
թագաւորաց ի քրիստոսէ ի վեր մինչեւ
ցայսօր:

Թ. 1ա.— Յանգ հայ կաթողիկոսաց:

Թ. 5ա.— Խաղայ Աթոռն ի Սիս, ի՛ Կիլի-
կիա:

Թ. 7ա.— Կաթողիկոսք յէջմիածին:

Թ. 9ա.— Յանգ հայ թագաւորաց եւ կարգ
սողաչին, Արշակունեաց:

Թ. 12ա.— Կարգ երկրորդ հայ թագաւո-
րաց, Ընուրինեանց:

Թ. 13բ.— Բանֆ արժանագոյնֆ յիշա-
տակի:

Թ. 16ա.— Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղ-
(դ)ափառ հաւատոյ:

Վասն առնելոյ Եկեղեցոցն յարեւիլից:

Հ Ի Շ Ա Տ Ա Կ Ա Ր Ա Ն

Թ. 15ա.— Շնորհօք ամենազօրին Աս-
տուծոյ մերոյ... աւարտ եղեւ թղթիկս պատ-
մութեան հայոց կաթողիկոսաց եւ թագաւո-
րաց, որ հայոց կոչի գաւազանագիրք: Բա-
ղում աշխատանս կրելով հաւաքեցի աստի եւ
անտի, ի մի տուի շարայարեցի, առ ի զբօ-
ւանս եղբարց մերոց հայոց ճշմարտասի-
րաց: Արդ՝ որք հանդիպիք սմա, յիշեսցիք ի
մաքրափայլ աղօթս ձեր զի լոյս ածող սորին
Տէր Յակոբ վարդապետն ի կարգէն Յիսուս-
եանց, եւ ընդ նմին ըմտամպօլցի Տէր Յա-
րութիւն եպիսկոպոս, պատճառ տպագրու-
թեան սորին, եւ տպագրութեան հոգաբարձու
դառաքելագործ Տէր Խաչատուրն, որ եւ դուք
յիշեալ լիջիք ի Տեառնէ մերմէ Յիսուսէ
Քրիստոսէ, ամէն:

№ 79

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹՂԹԵՐ

Թերթեր՝ 35:— Պրակներ՝ 5, յուրաքանչյուրը 8 թերթից:— Մեծութունը՝ $20,6 \times 16,5 \times 0,6$ սմ.:— Նյութը՝ սպիտակ հասարակ թուղթ:— Կազմը՝ չուխի:— Վիճակը՝ քայքայված:— Գրությունը՝ երկսյուն (թ. թ. 1ա—10ա, 28ա—35բ) և միասյուն (թ. թ. 10բ—26ա):— Դատարկ թղթեր՝ թ. թ. 26բ—27բ:— Տողերը՝ 25:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ բուրգիր:— Զարգացրություն՝ չկա, միայն մի քանի վերնագրեր և գլխագրեր գրվել են կարմիր թանաքով:— Գրիչը՝ Հակոբ-վարդապետ, ի կարգին Հիսուսյանց (ճիշտ նախորդ ձեռագրի գիրն է):— Ժամանակը՝ 18-րդ դար:— Վայրը՝ Կոստանդնուպոլիս:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— Թուղթ Աղեֆաանդր Հայոց կաթողիկոսի գոր գրեաց առ մետասաներորդ Կղեմէս պապն:

Թ. թ. 10բ—25բ.— Ձեռագրի գրիչը կանգ է առել 18-րդ դարի սկզբներին հայերի և կաթոլիկների միջև տեղի ունեցող վեճերի վրա: Նկարագրում է նաև հայերի և կաթոլիկ եկեղեցու հին հարաբերությունները:

Թ. թ. 25բ—26ա.— Ուսանավոր 9 տնից, ուրի սկզբնատառերը ագրոստիկոսով հոդվում են՝ «ՄԱՐՏԻՐՈՍԷ», իսկ վերջին տան մեջ կրկին հիշվում է նույն անունը այսպես՝

Է՛ր պարծիս անուամբ դու Մարտիրոսի.

Սպեղանի վիրացդ կոյսն Երանուհի,

Առ գրած որդին բարեխօսեսցի,

Վշտացեալ գերոյդ զի ողորմեսցի, ամէն:

Թ. թ. 28ա—35բ.— Աբրահամ Գ. Կրեւտացի կաթողիկոսի (1734—1737 թ. թ.) թուղթը Սպահանի հայերին և նրանց առաջնորդ Աստվածատուր աստվածաբան վարդապետին, գրված 1736 թվի փետրվարի 1-ին:

№ 80

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Թերթեր՝ 36:— Պրակներ՝ 3, յուրաքանչյուրը 12 թերթից:— Մեծութունը՝ $16,5 \times 12,3 \times 4$ սմ.:— Նյութը՝ գունատած և դեղնած հասարակ թուղթ:— Կազմը՝ առաջին երեսը անկազմ, կողքը ընկել է, իսկ երկրորդ երեսը կաշեպատ տախտակ, քայքայված:— Վիճակը՝ անբավարար: Սկզբնական ձեռագրի առաջին 22 պրակները կորել են: Այժմ մնացել են միայն ի՞նչ պրակի վերջին 2 թերթերը և ԻԳ, ԻԴ և ԻԵ պրակները: Ձեռագրի անջևի մասում միացված է մի հին տպագիր պատառիկ, էջ 135-ից մինչև 384, որ վատ վիճակում է,

խոնավությունից թղթերը իրար կպած են և ժանգի պոչն առած:— Գրությունը՝ երկսյուն:— Գծումները՝ ճշումով:— Գիրը՝ բուրգիր:— Զարգացրություն՝ կան բավականի գեղեցիկ թռչնագրեր և զարդագրեր, ինչպես նաև լուսանցազարդեր: Պարբերությունները սկզբում են մի անգամ կարմիր և մյուս անգամ կապույտ թանաքով:— Գրիչը՝ Մարտիրոս քահանա:— Մաղկողը՝ Հովհաննես:— Ժամանակը՝ 1420 թ.:— Վայրը՝ Գուգացոց նահանգի Զորոց գավառի Սանահնի վանքը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. թ. 34բ—36ա.— (Փ)առք... Արդ՝ ես Մարտիրոս քահանայ, թախծեալ եմ տրտմական սգով, ոչ ունելով իմ զաւակ ի Սիրովն և ընտանեակ յերուսաղէմ, ցանկացայ այսմ աստուածաբուղիս քառավտակ եղեմածաւալ աղբերէն... ի վայելս անձին իմոյ եւ ի պայ- (ծառութիւն) մանկանց Սիրովնի, եւ փոխեց (ելոցն) ի Քրիստոս, հաւրն իմոյ Իգնատիոսի եւ մաւրն իմոյ Խալինարին, եւ այլ ամենայն արեան մերձաւորացն... Մարտ(իրոսի)... աղաչեմ... յիշել զմեզ առաջի զենլոյն Քրիստոսի, զիս զՄարտիրոսս և զհարազատ եղբայրն իմ զԴաւիթ, եւ զդեռաբոյս զաւակն իւր զԱբիսաղամն, եւ դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի, ամէն: Արդ, գրեալ եղեւ սա ի ժամանակս բռնակալին Յուսովի, ի թագաւորութեան վրաց Ալեքսանդրի, ի նահանգի Գուգացոց, ի գաւառիս Զորոց, ի գերահռչաք եւ յերկնահանգեալ սուրբ ուխտիս Սանահնի, որ է ան... հիմն մանկ... ի ձեռամբ... նա մեզ եւ իր ց... ուն գրչացս... եւ Յովհաննէս վարդապետս, երկուց հարազատաց: Եւ ոսկիազաւծ խորանաց եւ ծաղկերանգ վարդաշատ ծաղկանց նկարողի Յովհաննիսի աիրասնունդ աշակերտի, ընդ նոսին եւ զմեզ զաշխատողքս յիշեցէք ի Քրիստոս Յիսուս, ամէն:

Ի թուարբերութեանս (յ)արեթական, մեծ տոմարիս ՊԿԹ (1420 թ.): Տանտուէր ձուկն եւ նահանջ ամն:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 36ա.— Դ(արձեալ յիշեցէք)... ես Մարտիրոս արեղէս կալա(յ) զսուրբ Աւետարանս ի փրկութիւն հոգոյ իմոյ եւ ծնողացն իմոց, հաւրն իմ ըմտեփանոսին, եւ մաւրն իմ Ամբարին, եւ եղբարց իմ Ալեգսանոսին եւ Սարմաստին, Մխիթարին, (զստ)երաց իմ Խան... Խաթունին եւ Գուլվարդին (3 տող պատուվել է)... տարկաւագին, Յովսէփին տարկաւագին, եւ ամենայն յարեան մերձաւորացն, կենդանեաց եւ ննջեցելոցն, յիշատակ անջընջ(ելի): Յիշեցէք ի Քրիստոս, Աստուած յիշողսն յիշէ զիւր արքայութիւնն, զամէն:

(Շարունակելի)